

ՆՈՐԱՀԱՅՏ ՄԻ ԹՈՒՂԹ՝ ՈՒՂՂՎԱԾ ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԻՆ

Ս. Ս. ՄՈՒԹԱՐՅԱՆ

Գրիգոր Մագիստրոսի նամականին քաղաքական, հասարակական և կրոնական նշանավոր գործիչներին ուղղված 11-րդ դարի գրական կարևորագույն հուշարձաններից է: Նրա շնորհիվ մենք ծանաչում ենք ժամանակի շատ նշանավոր մարդկանց, ծանոթանում նրանց կյանքի հանգամանքներին, որոշ դեպքերում՝ նույնիսկ կենցաղային մանրամասներին, հնարավորություն ստանալով ծիշտ պատկերացնելու նրանց դերն ու կշիռը հայ կյանքում:

Հայտնի է, որ դեռևս չեն գտնվել այն նամակները, որոնք գրվել են Մագիստրոսի թղթերին ի պատասխան: Այդ նրատակով մաշտոցյան մատենադարանում կառարած մեր որոնումների ընթացքում պատահաբար հայտնաբերվեց մի նամակ, որը վերնագրված է այսպես. «Հարցմունք Գրիգորի Պահլավունայ և վեստարխի և պատասխանի Սարգիս վարդապետի և գիտնականի վասն Առաջաւորի պահոցն»¹:

Այն օգնեց մեզ պարզելու, որ մեր ուսումնասիրությունների ընթացքում գտած որոշ պատահիկներ ու հատվածներ, որոնք Մագիստրոսի գրչին են պատկանում, ցույց են տալիս, թե մերօրյա նրա նամականին, այնուամենայնիվ, թերի է, և որոշ թղթեր ու նրանց առանձին հատվածներ այնտեղից անհետացել են: Մեզ համար կարևոր է պարզել նաև, թե գտնված թուղթը որքանով է վավերական: Իսկ դա հաստատելու համար կան մի քանի վստահեչի փաստեր: Այսպես.

1. Թղթի վերնագրում կա հստակ ցուցում այն մասին, թե դա գրել է Սարգիս վարդապետը և ուղղված է Գրիգոր Պահլավունուն: Այդ մասին խոսվում է նաև նրա վերջում:

Եեշտված է հատկապես Գրիգորի վեստարխի պատվանունը: Այս կոչումով մեզ հայտնի է միայն Գրիգոր Մագիստրոս Պահլավունին: Նրան մենք չենք կարող շփոթել Շնորհալու եղբայր Գր. Պահլավունու հետ²: Զանի որ վեստարխ բառը ստուգաբանվում է վեստ՝ ազնվական, ազատ իշխան, քաջ և արխ (հունական կրճատ արժան բառն է)՝ առաջնորդ, իշխան ու արխունտ. (իբրև պետական աստիճանավոր) նշանակություններով: Նման կոչումը տրվել էր դեպքում հարմար է միայն Մագիստրոսին:

2. Նամակագիր Սարգիս վարդապետ: Նամակներից գիտենք, որ այդպիսիք երեքն են՝ Սարգիս Անուոյ, Սարգիս Սևանոյ և Սարգիս վարդապետ սուրբ Կարապետի³: Զի կարելի որոշակիորեն ասել, թե սրանցից հատկապես որն է այդ Սարգիսը⁴: Բայց թղթի բովանդակությունը մտածել է տալիս, որ հիշյալ Սարգիս վարդապետը և գիտնականը ամենից առաջ Սարգիս Անեցին կարող է լինել: Նրան է, որ ուղղված են Մագիստրոսի ԺԸ, ԺԹ, Ի, ԻԱ թղթերը և նրան է Մագիստրոսն անվանում «Հզոր հետոր և աստուածայինոյ տելչտիս»⁵: Պահլավունին նրա հետ կարող էր նմանատիպ թեմաներով նամակագրություն ունենալ:

3. Մագիստրոսը լայնախոհ հեղինակ է: Նա սիրում է երևույթների միջև զուգահեռներ անցկացնել: Տարօրինակ չէ, որ ուշադրություն դարձնեք հայ և հույն եկեղեցական ձեսերի տարբերություններին: Այդ կապակցությամբ Սարգիս վարդապետին նրա առաջադրած հարցերի բազմազանությունը Առաջավորաց պահքերի և այլ ձեսերի վերաբերյալ համահունչ են Մագիստրոսի հետաքրքրություններին:

Զգացվում է նաև, որ Մագիստրոսի յուրահատուկ ոճը⁶, այնուամենայնիվ, ազ-

¹ Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագիր № 4669, էջ 106ա—117բ: Այսուհետև՝ Ձեռագիր և էջահամարը:

² Տե՛ս Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, եր., 1942 թ.:

³ Տե՛ս Կարապետ Կոստանյանց, Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Ալեքսանդրապոլ, 1910 թ., էջջ 294—298: Կա նաև մի չորրորդ թղթակից, որին Մագիստրոսը Կառամարտիկ է կոչում: Մանրամասն տե՛ս էջ 310: Այսուհետև՝ Թղթեր:

⁴ Նույն տեղում, էջջ 52—66:

⁵ Նույն տեղում, էջ 57:

⁶ Տե՛ս նույն տեղը, էջջ 59—60:

դեյ է Սարգսի վրա: Փաստը՝ փաստ, իսկ ճշմարտությունն այն է, որ միջնադարի-
յան նամակի հեղինակը և հասցեատերը որոշվում են վերնագրական ցուցումներով: Այդ կա-
նոնով են առաջնորդվում բառացիորեն բոլոր նամակագիրները, և մենք էլ պարտավոր ենք
հավատալու մեր գտած նամակի վերնագրում⁷ պահպանված տեղեկություններին: Տվյալ դեպ-
քում սա է ամենաճիշտ ելքը:

Ավարտելով մեր խոսքն այս կապակցությամբ՝ ասենք, սակայն, որ Սարգսներին ուղղված
նամակներից ոչ մեկում պահքերի մասին խոսք կամ ակնարկ չենք գտնում⁸: Այդ հանգամանքը
հուշում է, որ մեր գտած թուղթը Մագիստրոսի մի այնպիսի թղթի պատասխան է, որը նա
ինչ-ինչ պատճառներով հարմար չի գտել դնելու իր ժողովածուում, և կամ էլ այն ժողովածուից
անհետացել է:

Սարգսի վարդապետի թուղթն սկսվում է հետևյալ հարցով. «Որ հարցեալ էր ի քէն, թե
զի՞նչ է պատճառն, որ հայ ազգո՞ր պահեն Առաջատրի Պահսն, և այլազգք ոչ պահեն, կամ
զի՞նչ պատճառն, որ Հոռոմք Պանրոտոյ անեն և Հայք⁹ ոչ անեն»:

Այս հարցերին նա մեկ առ մեկ սկսում է պատասխանել՝ բերելով սկզբում ուրիշների կար-
ծիքները նախնական պահքերի մասին: Հեղինակը գիտակցում է, որ պահքերը քրիստոնեա-
կան եկեղեցու ծիսակատարությունների կարևոր մասն են կազմում, և դրանց անտեսումը
նույնքան անթույլատրելի է, որքան աստվածաշնչյան պատվիրանների խախտումը:

«Ոմանք կարծում են,— ասում է նա, թե Տերը,— (Ի) նախաստեղծեն Ադամայ¹⁰ եղաւ
առաջին պահս ի դրախտին»՝ պատվիրելով ուտել բոլոր ծառերի պտուղները, բացի մեկից,
որի պտուղը նրա համար մահացու էր: Այդ պատվիրանը խախտելու պատճառով է Ադամն
արտաքսվել դրախտից: Ոմանք էլ առաջին պահքերի պատիվը վերագրել են Նինվեացիներին,
որոնք դրանք պահելու պատճառով չեն զրկվել աստվածային շնորհներից: Նամակագրի նպա-
տակն է ցույց տալ, որ պահքերը չխախտողները շնորհների են արժանանում, իսկ խախտող-
ները պատժվում են, ինչպես Ադամը:

Պահքերի տևողության կապակցությամբ նա հիշում է Հակոբոս և Սեղբեստրոս սուրբ
հայրերին, որոնք սահմանել են յոթնօրյա պահք¹¹, քանի որ այդքան օր են կարողացել դի-
մանալ: Իսկ մեզանում առաջին պահքերը սահմանվել են Տրդատի օրերում: Լուսավորիչը
կարգել է հնգօրյա պահքը. «Եւ մեզ վասն այսորիկ պահեմք ամ ամէ և ասեմք զսա Առաջ-
տրի Պահս»¹²:

Իր նկարագրությունը ավելի ամբողջական դարձնելու համար և ցանկանալով ներքին
կապ ստեղծել 4-րդ դարի քրիստոնեության տարածման ժամանակների տարբեր անձնավորու-
թյունների ու սրբերի միջև՝ նա ավելացնում է, թե դրանք կատարվեցին, երբ մարտիրոսվեց
սուրբ Սարգիսը: Այդ այն Սարգիս զորավարն է, որի անունը հայ եկեղեցին սրբացրել է: Այս
կապակցությամբ Շնորհալին հասակորեն հաստատում է, որ անկախ Սարգիս զորավարի
հունական ծագումի՝ նա հայ եկեղեցու սրբերից է¹³: Մեզանում եկեղեցին սահմանել է եռ-
օրյա պահք, Հայսմավուրքում¹⁴ կայունացվել են նրա տոնի օրերը, և նրա մասին գրվել է
շարական¹⁵: Հայ և օտար (ասորական, եթովպական և այլն) աղբյուրներում Սարգիսը վար-
քագրական պատումների¹⁶ գործող անձ է: Դրանցում նա մարտնչում է հեթանոսության
դեմ և առանց երկմտելու կյանքը տալիս քրիստոնեական հավատի գոյատևման համար:

Շարունակելով իր խոսքը ծեսերի վերաբերյալ՝ նամակագիրն այնուհետև անդրադառնում
է Գրիգորի այն հարցին, թե ինչու են հույները պահում Պանրոտի պահքը, իսկ հայերը՝ ոչ:
Նա բացատրում է, որ ինքն այդ առթիվ տեղեկություններ է քաղել Թեոդորոս «իմաստասե-
րի» երկերից. «Մեք զայս գտաք պատճառ ի գրոցն Թեոդորոսի իմաստասերի և գիտնակակի,
(որ) էր ազգաւ ի Յունաստանե»¹⁷: Սարգիս վարդապետը նրանից է տեղեկացել, որ բյու-
զանդական Հուլիանոս կայսեր օրոք (361—363 թթ.) քրիստոնյաները խիստ հալածանքների

⁷ Տե՛ս 2եռագիր, էջ 113բ:

⁸ Տե՛ս Թղթեր, էջք 52—76:

⁹ 2եռագրում՝ Հայգ:

¹⁰ 2եռագրում պակասում է «Ի» նախդիրը:

¹¹ Տե՛ս 2եռագիր, էջ 114բ:

¹² Նույն տեղում:

¹³ Տե՛ս Ն. Շնորհալու հատվածը, «Սովիերք Հայկականք», ԺԶ, Վենետիկ, 1854 թիվ, էջք

6—11:

¹⁴ Տե՛ս «Հայսմաւուրք», Պոլիս, 1730 թիվ, հոկտեմբեր և հունվար ամիսների տակ:

¹⁵ Տե՛ս «Շարական», Պոլիս, 1853 թիվ, էջ 126:

¹⁶ Տե՛ս Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, էջ 402, ինչպես նաև
«Լիկատար վարք և վկայաբանություն...», հ. Բ, Վենետիկ, 1811 թիվ, էջ 3:

¹⁷ 2եռագիր, էջ 115ա:

են ենթարկվել: Կայսրն արգելել է նաև քրիստոնեական պահեցրի պահպանումը: Նա բոլորից անխտիր պահանջել է, որ պահեցրի փոխարեն գոհի միս ուտեն: Սակայն քրիստոնյաները հաց ու պանիր էին ուտում ծածուկ՝ պահելով սահմանված պահեցրը: Այդ ծեսի մասին հայկական աղբյուրներում նա հիշատակություն չի կարողացել գտնել, որովհետև հայ եկեղեցում այդպիսի պահեց չեն պահել:

Այնուհետև Սարգիսն անդրադառնում է մեկ այլ ծեսի ըննությանը: «Վասն Աղուհացիցն էիք հարցեալ,— գրում է նա,— թե ընդ է՛ր ոմանք ոչ ուտեն»¹⁸: Եվ դա այն պատճառով, որ Հայոց Եզր կաթողիկոսը (630—641 թթ.)¹⁹ Կարինի 633 թվականի հայտնի ժողովում ընդունել է քաղկեդոնականություն: Սարգիսը նրան պատարակում է «Լուսաւորիչի ուղղափառ և սուրբ» հավատն ուրանալու համար: Հայ եկեղեցին ձևական համաձայնության է գնացել հունական եկեղեցու հետ: Այդպես էր պահանջում արևելք եկած Հերակլ կայսրը (610—641 թթ.): Կայսեր նպատակն էր արաբների դեմ ընդհանուր քրիստոնեական ձակատ ստեղծել: Դա ձեռնառու էր երկուստեք, և Եզրն իր հերթին գիջումն է կատարել: Սակայն նրա հաջորդ վեց կաթողիկոսներն իսկապես հարեցին քաղկեդոնականության, մինչև Հովհաննես Օձնեցին (717—728 թթ.), որը 720 թվականին գումարեց Դվինի ժողովը, ուր կրկին վերահաստատեց հին հայկական ծեսերը և մերժեց օտարամուտ ամեն ինչ²⁰: Լինելով շատ զարգացած անձնավորություն՝ նա կազմում է նաև «Կանոնագիրքը»²¹, ի մի հավաքելով հայոց եկեղեցու նախորդ շրջանի կանոնները մինչև իր օրերը: Նրա նպատակն էր՝ վերջնականորեն հրաժարվել քաղկեդոնականությունից և, մյուս կողմից, խիստ հակահարված տալ 8-րդ դարում գոյություն ունեցող աղանդներին: Այսպիսով, անպայմանորեն, Օձնեցին հասնում է կարևոր արդյունքի: Նա վերահաստատում է «Առաջին հաւատս..., զոր սրբոյն Գրիգոր էր ասանդեալ»²²: Հայ կյանքում հարթանակ է տանում հակաքաղկեդոնական հոսանքը, և Մագիստրոսի նամակագիրը զարմանում է, թե ինչու է հույն հոգևորականությունը թյուր տեսակետ պաշտպանում: Այս անգամ նա խոսում է Ջառասնօրյայի մասին: Հույները, որ, անշուշտ, ծանոթ էին Սուրբ Գրքին, պաշտպանում են Ջառասնօրյան լուծելու անհիմն տեսակետը. «Ուստի ընկալան ալդպիսի անօրէն օրէնք, որոց ոչ ի մարգարից ունեն վկայութիւն և ոչ ի անտարանչացն, զոր զկանոնական պահս լուծանէին»²³: Չէ՛ որ, ինչպես վկայակոչում է նա, Մովսեսը քառասուն օր կարողացավ անջուր և անուտեւտ դիմանալ, ուստի և հայերը ճիշտ են իրենց պնդումի մեջ: Ծեսերի՝ շուրջ 7—9 դդ. ծավալված խիստ ու անզիջում պայքարն, իհարկե, արտահայտություն էր այն բանի, որ հայ եկեղեցին ձգտում էր ազատվել բյուզանդական ազդեցությունից, որին և հասավ:

Նամակի վերջում խոսվում է ծեսերի ժամանակ օգտագործվող ձեթի, յուղի, ձկան և այլնի մասին: Մյուտոնը համեմատվում է Մատթեոսի Ավետարանի յոթ հիմար և յոթ խելոց կույսերի ծրագների յուղի հետ: Ծեշտվում է, որ օր ծերության յուրաքանչյուրը խնայի իր կյանքի սրբալուրդը, ինչպես որ խնայեցին խելոց կույսերը: Այդ գրույցի այլաբանական նշանակությունն այն է, որ եթե այս կյանքում մարդիկ զրկանքներ չկրեն, ապա հանդերձյալ կյանքում շնորհների չեն արժանանա: Այն միտքն է շեշտվում նաև, որ մարդ էակը պետք է իր նկատմամբ պահանջկոտ լինի:

Սարգիս վարդապետն իր խոսքն ավարտում է՝ ասելով, որ շատ բաների մասին էլ ինքը լուում է: Դրա պատճառն իր «փանաքիմացությունն» է:

Պետք է նշել, որ թղթի բնագիրը մեզ է հասել զգալի աղճատումներով և բազմաթիվ սխալներով: Դա մասամբ գրչի ոչ գրագետ լինելուց է²⁴: Սակայն այս թղթի գիտական ու ճանաչողական արժեքը մեծ է: Նախ այն, որ մենք ծանոթանում ենք 11-րդ դարի մտավորական Սարգիս վարդապետի նախասիրությունների, պատկերացումների և գիտելիքների հետ: Իբրև հոգևորական՝ նա իր տեսակետներն հիմնավորում է ավետարանիչների ու մարգարեների դրույթներով: Կիրթ մարդ է և ունի բարձր արժանապատվություն: Նա կարողանում է ձևատեսակներով իր անձը՝ մեծարել Մագիստրոսին: Որոշակի բացասական վերաբերմունք

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Խոսքը Եզր Ա Փառածնակերտցի կաթողիկոսի մասին է: Պատմաբանների մի մասը կարծում է, որ նա առերես է ընդունել քաղկեդոնականությունը: Մանրամասն տե՛ս *Մաղաքիա Օրմանյան*, «Ազգապատում», Պոլիս, 1912 թ., էջ 693:

²⁰ Դվինի ժողովի մասին տե՛ս «Կանոնք Դունոյ սուրբ ժողովոյն», Վաղարշապատ, 1905 թիվ.

²¹ Տե՛ս «Կանոնագիրք Հայոց», հ. Ա, Եր. 1964 թիվ, էջ XV: Իր կանոնները՝ էջ 514-ից սկսած:

²² Չեռագիր, էջ 115բ:

²³ Նույն տեղում, էջ 116ա:

²⁴ Տե՛ս «Ցուցակ ձեռագրայ Մաշտոցի անվ. մատենադարանի», հ. Ա, Եր., 1965 թիվ, էջ 1257: Չեռ. № 4669, 1675 թիվ, ժողովածու, գրիչ՝ Գրիգոր երեց Գաղեցի:

ունի հայրենի եկեղեցուն վնաս հասցրած մարդկանց նկատմամբ և ընդհակառակը՝ արժանի է մատուցում հայ եկեղեցուն և դավանանքին նվիրված գործիչներին: Մյուս կողմից էլ թուղթը հետաքրքրություն է ներկայացնում ժանրային առումով: Մենք տեսնում ենք, թե ինչպիսի ձևախմբատային փոփոխության է ենթարկվում թղթի ժանրը 11-րդ դարում²⁶:

Եթե Գրիգոր Մագիստրոսին ուղղված այդ թուղթը հետագայում հրատարակվի և ուսումնասիրվի, ապա դա գուցե սկիզբ դառնա նաև այն շատ ու շատ կարևոր, բայց դեռևս մեզ անհայտ մյուս փաստաթղթի թղթերի հայտնագործմանը, որոնց հետ կպարզվեն բազմաթիվ անեղծվածային ու ակունքային հարցեր:

С. М. МХИТАРЯН—Вновь найденное письмо, адресованное Григору Магистросу.— Найденное письмо важно не только тем, что является первым ответом Магистросу, но и потому, что в нем представляется суть разногласий между Армянской и Византийской церквями. Анализ письма показывает, что в круг интересов Магистроса входили также догматические споры, что адресат был заинтересован в упорядочении отличий григорианских обрядов от православных.

²⁶ S⁶ «Византийская литература» сборник Раздел «Византийская эпистолография», М., էջ 181: